# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-18/1.1

ք. Երևան

«01» 03 2018 թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Չալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մատակարար. ԱՄՎ>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Թումասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհապաղ փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5000000 ( հինգ միլիոն )** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար

հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մատակարար. ԱՄՎ>>ՍՊԸ
ք. Երևան, Լ. Լիսինյան
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158
Էլ. Հասցե matakararltd@mail.ru

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«01» 03 2018 թ. կնքված
«ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՄԴ-18/1.1» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50311120/1 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 5000000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 | Մինչև 2018թ.-ի դեկտեմբերի 15-ը |

| | | /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | **Համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայություններ** | |
| | **Համակարգչի** | |
| | Դիագնոստիկա | 10000 |
| | Պրոֆիլակտիկա | 10 |
| | Սնուցման բլոկի վերանորոգում | 10 |
| | Սնուցման բլոկի փոխարինում /550վ /ներառյալ սնուցման բլոկը 550վ | 10 |
| | BIOS-ի վերածրագրավորում | 10 |
| | Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում | 10 |
| | CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i5 4460 | 10 |
| | CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i5 3340 | 10 |
| | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | 10 |
| | Համակարգչի մայրական տախտակի նորոգում | 10 |
| | Համակարգչի մայրական տախտակի փոխարինում /ներառյալ մայրպլատան/ | 10 |
| | RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մբ 667/800ՄՀՑ (DDR2 1024Mb 667/800MHZ ) | 10 |
| | RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մբ 667/800ՄՀՑ (DDR2 2048Mb 667/800MHZ ) | 10 |
| | RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մբ 1600ՄՀՑ (DDR3 2048Mb 1600MHZ ) | 10 |
| | RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մբ 1600ՄՀՑ (DDR3 4096Mb 1600MHZ ) | 10 |
| | SVGA վերանորոգում /ներառյալ պահեստամասերը/ | 10 |
| | SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 512Մբ ՊիՍիԱյ -Էքսպ(Ati Radeon 512Mb PCI Exp ) կամ համարժեքը | 10 |
| | SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 1Գբ ՊիՍիԱյ -Էքսպ(Ati Radeon 1Gb PCI Exp) կամ համարժեքը | 10 |
| | HDD փոխարինում ներառյալ 250ԳԲ, 7200ռպմ,SATA | 10 |
| | HDD փոխարինում ներառյալ 500ԳԲ, 7200ռպմ,SATA | 10 |
| | HDD փոխարինում ներառյալ 1Տբ, 7200ռպմ,SATA | 10 |
| | CD-RW, DVD-RW նորոգում /ներառյալ պահեստամասերը/ | 10 |
| | DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը | 10 |
| | Ցանցային քարտի տեղադրում /ներառյալ ցանցային քարտը/ | 10 |
| | **Անխափան սնուցման սարք** | |
| | Դիագնոստիկա | 10 |
| | Ղեկավարման պլատայի վերանորոգում | 10 |
| | Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-7 Ah) | 10 |
| | Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-5 Ah) | 10 |
| | Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-9 Ah) | 10 |
| | Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-17 Ah) | 10 |
| | **Մոնիտոր** | |
| | ԼՍԴ լամպի (17") փոխարինում նորով | 10 |
| | ԼՍԴ լամպի (18,5") փոխարինում նորով | 10 |
| | ԼՍԴ լամպի (20") փոխարինում նորով | 10 |
| | Մատրիցայի (18,5") փոխարինում նորով | 10 |
| | Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում) | 10 |
| | **Ցանցային սարքավորումների** | |
| | 8-48 տեղանոց Սվիչների վերանորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| | **Լազերային տպիչների և պատճենահանող սարքերի** | |
| | **Canon MF 6310 մոդելի լազերային տպիչի** | |
| | Դիագնոստիկա | 10 |

| | |
|---|---|
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 7000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Մայր պլատայի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Canon MF 4410/4730/4870dn մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 7000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Մայր պլատայի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում նորով | 10 |
| մագնիսական լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Canon iR 2202 Պատճենահանող սարքի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Լիցքավորում | 8000 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Վերանորոգում | 10 |
| Սքաների Լամպի փոխարինում ներառյալ A3 լումինիսցենտայինը | 10 |
| **Canon iR 1020 Պատճենահանող սարքի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Լիցքավորում | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Վերանորոգում | 10 |
| Սքաների Լամպի փոխարինում ներառյալ A3 լումինիսցենտայինը | 10 |
| **Canon MF 3110 մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 5000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |

| | |
|---|---|
| Մայրպլատի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Canon MF 3010 մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 7000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Մայրպլատայի փոխարինում (Formator) | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Canon MF 4018 մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 7000 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Մայրպլատի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **HP LserJet 1010/1018/1020 մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 5000 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Մայրպլատի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **RICOH SP 200s մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Քարթրիջի լիցքավորում /չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում | 5000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Մայրպլատի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |

| | |
|---|---|
| Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Samsung SL-M2020/XEV մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում /չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում | 5000 |
| Մայր պլատայի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **Xerox Phaser 3020 մոդելի լազերային տպիչի** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Քարթրիջի լիցքավորում /չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում | 5000 |
| Մայր պլատայի (formator) նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| **HP 630dn մոդելի պատճենահանման սարք** | |
| Դիագնոստիկա | 10 |
| Պրոֆիլակտիկա | 10 |
| Թմբուկի փոխարինում | 10 |
| Քարթրիջի լիցքավորում | 10 |
| Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում | 10 |
| Վառարանի նորոգում կամ փոխարինում նորով | 10 |
| Թերմոթաղանթի փոխարինում | 10 |
| Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| Կարատրոնի փոխարինում նորով | 10 |

| | | |
|---|---|---|
| | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| | **XEROX WC 3655 մոդելի պատճենահանման սարք** | |
| | Դիագնոստիկա | 10 |
| | Պրոֆիլակտիկա | 10 |
| | Թմբուկի փոխարինում | 10 |
| | Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում | 10 |
| | Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit) | 10 |
| | Քարթրիջի լիցքավորում / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում | 10 |
| | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 10 |
| | Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| | Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| | Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| | Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| | **HP LaserJet Pro 100 color MFP M175** | |
| | Դիագնոստիկա | 10 |
| | Պրոֆիլակտիկա | 10 |
| | Թմբուկի փոխարինում | 10 |
| | Քարթրիջի լիցքավորում / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում | 10 |
| | Մաքրող դանակի փոխարինում նորով | 10 |
| | Կարատրոնի փոխարինում նորով | 10 |
| | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 10 |
| | **Սկաներ** | |
| | Դիագնոստիկա | 10 |
| | վերանորոգում | 10 |
| | սկաների լամպի փոխարինում A4 | 10 |
| | սկաների լամպի փոխարինում A3 | 10 |

* Սարքերի և սարքավորումների տեղափոխումը իրականացնում է Կատարողը:
** Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից:
*** **Քարթրիջի լիցքավորումը իրականացվում է ըստ պահանջի՝ իր ծավալի առավել ագույն չափով և մեկ աշխատանքային օրվա ընթացքում:**
**** **Սարքերի և սարքավորումների սպասարկումը իրականացվում է պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում՝ համաձայնեցնելով վերջինիս հետ:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մատակարար. ԱՄՎ>>ՍՊԸ
ք. Երևան, Լ. Լիսինյան
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158
Էլ. Հասցե matakararltd@mail.ru

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«01» 03 2018 թ. կնքված
«ՀՀՔԿԳ-ԳՀԾՁԲ-ՀՄԴ-18/1.1» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/1 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 720000 | 720000 | 720000 | 2520000 | 2520000 | 2520000 | 4320000 | 4320000 | 4320000 | 5000000 | 5000000 | 5000000 | **5000000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մատակարար. ԱՄՎ>>ՍՊԸ
Ք. Երևան, Լ. Լիսինյան
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158
Էլ. Հասցե matakararltd@mail.ru
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 01 » 03 2018 թ. կնքված
«ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-18/1.1» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________________ | հհ ________________ |
| ________________ | ________________ |
| հվհհ ________________ | հվհհ ________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.
Պայմանագրի համարը՝ « »
Պատվիրատուն՝ ի դեմս
________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ________________________________,
հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. դուրս գրված N________________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները.

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազ դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունը ընդունեց** |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«01» 03 2018 թ. կնքված
«ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՀՄԴ-18/1.1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն